11.05.2026թ. կնքված **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-25-05»** պայմանագրում
փոփոխություններ / լրացումներ կատարելու վերաբերյալ

համաձայնագիր № 1

ք. Երևան 04 հունիսի 2026թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ստեփան Աթոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Բ.Թադևոսյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-25-05» պայմանագրի 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Համաձայնագրի առարկան

1. Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին 2026թ. մայիսի 11-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-25-05» պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-25-05» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ սույն համաձայնագիր № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12	Հասցե՝ ք.Երևան, Արզումանյան 32-10
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900018004649	Հ/Հ 2481001168180025
ՀՎՀՀ 02625503	ՀՎՀՀ 01210095
Գլխավոր տնօրեն՝ Ս.Աթոյան	Տնօրեն՝ Բ.Թադևոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.